








Հ
Գրամ
Արժան
Կարգադրանք
Կամբիտ - Մաս

ԳԱՂՏՆԻՔ

ԿՂԵՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ

ԿԾՄ

ԱՐԻԻՆԱԼԻՑ ՎԻՀԵՐՈՒ ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆԸ



ԱՐՄԵՆՍԿ ՀԱՅԿՈՒՆԻ

1864

ԿԾՄ
809



Կ. ՊՕԼԻՍ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ռ. Յ. ՔԻՒՐՔՃԵԱՆ

— 1864 —



1873

1873

1873

1873

1873

1873

1873

Յ Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

1224



ինչպէս որ դերձակն իւր վերայ նոր հանդերձ ունենալու փափար՝ եւ ժամագործը սեպհական ժամացոյց չունի. նոյնպէս ալ բարոյականութիւն ծախողները ընդհանրապէս անբարոյական անծիմքներ են:

Ամեն դարերու եւ ամեն ազգաց մէջ կղերականութիւնը միշտ ամբաստանուած է, եւ մեր հայրերը՝ աշխարհիս այս մասին ունեցած փորձառութեան հաւատարմով, « աշխարհս կրօնաւորներէն պիտի փլչի », ըսուած խօսքը ընդունած եւ մեզ հաղորդած են:

Թողլով մէկդի հին աշխարհաց կղերականութեան վաս-
թարութիւնը, բուրմերուն ու քրմուհիներուն խաբէութիւն-
ներն ու պղծութիւնները, նոյն իսկ Ասուծոյ հին եկեղե-
ցիին մէջ բազմող կղերականութիւնը այն աստիճան անբարոյականութեան հասած էր որ « իժի ծնունդը », անուանեց զանոնք մեծ նշմարախօսն Քրիստոս:

Գալով աշխարհիս արդի կղերականութեան, սիրտ ունեցող մը արդարեւ կ'ապշի կը մնայ ու չկրնար որոշապէս մը-
սածել թէ ի՞նչ վախճան պիտի ունենայ նորա բռնած ըն-
թացքը:

Մէկդի առնելով կրօնական ուրիշ կազմութիւնները, եւր աչք մը դարձընեմք Քրիստոնեայ կղերականութեանց վերայ, զգուանք, յուսահատութիւն եւ կասաղութիւն կը լեցուի կուրծքերնուս մէջ. վասն զի այս խումբերը չէ թէ միայն Աւետարանի հոգւոյն հակառակ մէկզմէկ կ'ասեն ու կը բանադրեն, այլ նոյն իսկ իրենց հետեւող ժողովրդեան

բարոյական յառաջադիմութեան թշնամի են. միանգամայն այն աստիճանի հասած է ասոնց փառասիրութիւնը, շահասիրութիւնը եւ բղջախոհութիւնը, որ մարդ կ'ապշի կը մնայ ու չկրնար որոշել թէ որո՞ւ հետեւի, Քրիստոսի՞ թէ ոչ կրօնաւորաց, սրբո՞ց թէ ոչ սասանաներուն:

Յառաջաբանս կարճ կ'ընեմ, վասն զի իմ հոգիս աշխատութեանս ամբողջ ընթացքը պիտի յայտնէ, միայն թէ սա չափս ալ ըսել հարկ է թէ ես այս աշխատութեան ձեռք չպիտի զարնէի՝ եթէ ամենէն աւելի դրօշակիր չլինէի Քրիստոսի եւ մեր Հայաստանեայց Լուսաւորչական սուրբ Եկեղեցիին, որոնք ափսո՛ս այսօր այնպիսի պաշտպաններու եւ պաշտօնեայններու ձեռք մնացած են՝ որ փառքէ աւելի նախաթիք կը բերեն Քրիստոնէութեան, եւ կը հաստատեն թէ՛ դեռ աշխարհս Քրիստոնէութիւնն ընդունած չէ:



Գ Ա Ղ Տ Ն Ի Ք

Կ Ղ Ե Ր Ա Կ Ա Ն Ո Ւ Թ Ե Ա Ն

ԿԱՄ

ԱՐԻԻՆԱԼԻՑ ՎԻՋԵՐՈՒ ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆՆԸ

Գ Լ Ո Ւ Խ Ա.

Ո Ւ Խ Տ Ա Գ Ն Ա Յ Ո Ւ Թ Ի Ի Ն

Հ ՈՉԱԿԱՒՈՐ բող մը՝ որ իւր կենաց ամենաթանկագին մասն ալ ձեռքէ հանած էր, վերջապէս որոշեց անարդութենէ ազատիլ. ուստի այս խորհրդով գնաց իւր քահանան գտնելու. բարի ու Աստուածասէր քահանան՝ արդարեւ կորուսեալ կընական մը այսպիսի մէկ անօրինակ զղջումը տեսնելով, իւր կարողութեան ներածին չափ հարկ եղած խըրատներն ու յորդորները տուաւ նորա՝ եւ միանգամայն համողեց զայն, որ Ս. Հաղորդութիւնը առնելէն վերջը ուխտագնացութիւն մըն ալ ընէ:

Կիւնը՝ սրտի կատարեալ անկեղծութեամբ եւ արտասուելից աշուրներով քահանայէն զատուելով, ընդունած պատուիրանաց համեմատ առանց մէկու մը ընկերակցութեանը ուխտի գնաց այն վանքերէն մէկը՝ որ մեծ անուն ունէր իրեն դիմողներուն խընդիրները կատարելու մասին:

Այս կիւնը որքան որ իւր կենաց գարունը անցուցած էր, սակայն գեղեցկութիւնը դեռ կը պահէր. կովկասեան արտեւանունքներով շրջապատեալ խոշոր ու սեաւ աշուրները հրապուրիչ ազդե-

ցութեամբ՝ բարձր ու ճերմակ ճակատը սահմանող աղեղնաձև ե յօնքերուն տակ կը փալիլէին . առատ եւ փափուկ մազերը՝ նորա բարեձև գլխուն երկու կողմերէն վար թուլ թողուած , շքեղութիւն կ'ընծայէին նորա հակթաձև դէմքին , ճերմակ ու լեցուն այտերուն՝ որ փոքրիկ բարակ շրթունքներով , ձիւնի նման ճերմակ եւ մարդարտի սէս կանոնաւոր շարք ունեցող ակօսներով ճոխացեալ բերնի մը երկու կողմերը բարձրացած էին :

Մարդկային ընկերականութեան մէջ ամենէն զարմանալի եւ ամենէն ցաւալի բանը , դեղեցիկ կանանց շատերուն բողբոթեան զիջանելին է . այս անկրկի չարիքը ինչ պատճառներով ալ թէ յառաջ դայ , տակաւին ես համոզուած եմ որ ամեն ուրիշ պատճառներէ աւելի կղերականութեան պարտազանցութիւնն ու ապօրինաւորութիւնն է . վասն զի թէեւ իմաստասիրաբար կանանց շատերուն բող լինելը գտնուած ընկերութիւններուն անկանոնութիւններէն կամ ամուսնական պահանջմանց եւ իրաւանց պակասաւորութիւնէն կ'արդատաւորի , բայց եւ այնպէս քանի որ բարոյականութեան եւ օրինաւորութեան դասախօսները չեն աշխատիր որ այս ընկերական օրէնքները կարգադրեն եւ կանոնաւորեն , հարկաւ իրենք կը մնան մինակ պատասխանատու եւ պատճառ ամեն այս տեսակ աղետից , որ այսօր մարդկային ընկերականութիւնը փճացնելու եւ վատթարացնելու աստիճանին հասած են :

Մեր պատմութեան Հերօսուհին այնպիսի երկտասարդի մը պատճառաւ բող եղած էր , որ զինքը խարելէն , պղծելէն եւ վատահամբաւելէն վերջը մայրաքաղաքէս հեռացեր ու ալ ետ չէր դարձած . . .

Խեղճ ու դեռահաս աղջիկը իւր ծնողաց եւ ազգաց կանացը անկրթութենէն պատժուելով, եւ կրած կշտամբանացը չկրնալով դիմանալ, առաջին անգամ ինքզինքը մայրապետի մը կը յանձնէ, այնպիսի մայրապետի մը որ մի անգամ երեք օր եւ երեք գիշեր իւր սենեակէն դուրս չելլելէն վերջը՝ անուն հանած էր թէ՛ ինքը մեռնելով դժոխքն ու արքայութիւն տարուած է, որպէս զի անկից վերջը՝ տունէ տուն պտըտելով, ամին ընտանեաց մէջ քարոզութիւններ ընէ եւ գեղեցիկ կիները մեղքէ զգուշացնէ. ըստ որում կանանց՝ գեղեցիկները դժոխք կ'երթան եղեր:

Մայրապետը թէեւ առջի բերան ամենայն պարկեշտութեամբ կը վարուէր իրեն ապաստանած աղջկան հետ, սակայն ձմեռ գիշեր մը իւր օաղմոսերգութիւնները, աղօթքներն ու շարականները ըսելէն եւ յիտուն անգամէն աւելի իւր երկար ու խաչազարդ համրիչը դարձրնելէն վերջը, սկսեալ ամուր հառաչանք մը արձակել ու լալ. պարզ ու անմեղ աղջիկը այս արտաքոյ կարգի ողբը տեսնելով չկրցաւ անտարբեր մնալ, եւ իւր պաշտպանին տըրտմութեան պատճառը չհարցնել. մայրապետին ալ ուղածը այս էր. վասն զի երբ իւր հոգեզաւակը բազուկները բանալով կը գրկէր զինքը ու աղերսանօք կ'աղաչէր որ սրտին կսկիծը յայտնէ, ինքն աւելի կը բարձրացնէր իւր լացը եւ անանկ կը ցուցնէր թէ կը նուաղի. աղջիկը տեսնելով որ իւր խեղճ պաշտպանը նստելու կարողութիւն չունի, զանի վերցնելով անկողնոյ մը մէջ պառկեցուց եւ ինքն ալ քովը նստաւ արտասուալից:

Մայրապետը կամաց կամաց հառաչանքներն ու ողբերը դադարեցնելով գոցեց աչուրները եւ կէս ժամի

չափ խորունկ նիրհման մէջ ընկղմած ցուցուց ինք-
զինքը յետոյ հանդարտութեամբ մը աչքերը բա-
նալով, աղաչեց աղջկան որ դիչերը քովը պառկի .
աղջիկը սիրով ընդունեց նորա առաջարկութիւնը ,
մէկէն մտաւ վերձակին տակ եւ պառկեցան , Մայ-
րապետը հինգ վայրկեանի շափ լռիկ կենալէն վերջը
հարցուց աղջկանը թէ արթնն է :

— Այո՛ սիրելի մայրս , ըսաւ աղջիկն ուրախա-
նալով , եւ ինչպէս կրնամ քնանալ քանի որ սիրտս
սաստիկ անհանգիստ է ձեր այս դիչերուն կրած
տրամութեանը համար :

« Սիրտդ սիրեմ դաւակս , ըսաւ մայրապետը ,
աղջիկը բազուկներուն մէջ առնելով . ըսէ ինձի
վախցար . . . »

— Այո՛ շատ վախցայ որ բան մը չլինիս , պա-
տասխանեց աղջիկը անուշութեամբ :

« Կը ցաւիմ որ առաջուց պատմած չէի քեզ թէ
երբեմն հրեշտակ մը կու գայ ու դիս կը ծեծէ . եթէ
պատմած լինէի , չէիր վախնար անշուշտ » , ըսաւ
մայրապետը :

— Հրեշտակ մը քեզ կը ծեծէ , ըսաւ աղջիկը
դողդղալով , բայց ինչո՞ւ , ինչ կ'ուզէ քեզմէ :

« Ա՛հ աղջիկս , ինչպէս յայտնեմ քեզի պատ-
ճառը , իսկ թէ որ քեզ չյայտնեմ , որո՞ւ պատմեմ .
ո՞վ դիս կը սիրէ քեզի շափ » . կրկնեց մայրապետը
աղջիկը կուրծքին մէջ սեղմելով :

— Ըսէ ինձ ուրեմն սիրելի մայրս , ըսէ ինձ , ա-
ւելցուց աղջիկը որոշաբար , դուցէ կրնամ կարեկից
լինել քեզ :

« Ա՛հ , լոկ կարեկցութիւնը ինչ օգուտ կրնայ
առնենալ , քանի որ հրաման տրուած է ինձ այնպի-

սի առաքինութիւնն մը կատարելուն՝ որ իմ կարողութենէս վեր է. օգնական մը պարտիմ ունենալ», ըսաւ մայրապետը:

— Օգնական ես, գոչեց պարզամիտ աղջիկը, յայտնէ ինձ դադանիքդ:

«Մտիկ ըրէ ուրեմն աղջիկս, ըսաւ մայրապետը նստելով, ես թէեւ չեմ պարտաւորեր քեզ որ խոստանաս ինձ, սակայն գադանիքս լսելէդ յետոյ քեզ կը մնայ որոշումն ընել. անփորձ երիտասարդ մը որ կրօնասէր ծնողաց խիստ հսկողութեամբը մեծցած էր, դեռ աշխարհիս փորձութեանց տեղեկութիւն չունենալուն՝ վարդապետական պաշտօն մը առաւ վրան. խեղճը որ հիմայ մեծցած է՝ գիշեր ցորեկ կը տանջուի, վասն զի բնութեամբ արիւնոտ լինելուն իւր ցանկական կիրքը սաստիկ է. բայց որովհետեւ ուխտ ըրած է չամուսնանալ, հետեւաբար մէկ կողմանէ ըրած ուխտը եւ միւս կողմանէ իւր բնութեան պահանջումը զինքը չէ թէ միայն ապերջանիկ ըրած են, այլ նաեւ իւր կատարելիք սրբազան եւ Աստուածային արարողութիւններուն եւ պարտաւորութիւններուն ալ խոչընդոտ կը լինին. այս վարդապետը, աղջիկս, շատ անգամ կը տեսնէր զիս եւ դարման մը կը պահանջէր. իսկ ես ալ առաքինութեան վերայ տեղեկութիւն չունենալուս համար կը յանդիմանէի զինքը. օր մըն ալ դարձեալ երբ իմ խորհուրդս հարցուց, անանկ ծանր կշտամբանք մը ըրի իրեն զէմ՝ որ խեղճը ձիտը ծուռ հեռացաւ ինձմէ. նոյն գիշերը երբ սովորութեանս համեմատ կ'աղօթէի, ահաւասիկ ձեռքը հրեղէն թուր մը առած հրեշտակ մը ներկայանալով ինձ, ակրասաւ սաստիկ ձեծեղ զիս, եւ երբ ասպաշխարհելու


համար մեղքս հարցուցի, ըսաւ ինձ թէ « թէ որ դու ուխտեալ ես կոյս մնալու, չէ՛ր կրնար այնպիսի առաքինի կ'ին մը գտնել որ չամուսնանալու ուխտ ըրած խեղճ վարդապետի մը սիովանք տար » . այս խօսքերը ընելէն վերջը հրամայեց ինձ հրեշտակը որ անմիջապէս ձեռքէս եկածն ընեմ վարդապետին . հիմայ աղջիկս հաւատան ինձ որ այս գիշեր նոյն հրեշտակը դարձեալ զիս ծեծելով կը հրամայէր որ քեզ ընտրեմ այն վարդապետին համար . ալ դուն գիտես, խորհէ այս գիշեր եւ առաւօտուն ինձ յայտնէ քու կամքդ » :

Արօնական պահանջմանց եւ ճշմարիտ բարոյականութեան օրէնքներուն բոլորովին անտեղեակ խեղճ աղջիկը, որ մայրապետին պատմութեանը կատարեալ հաւատք ընծայած էր, անմիջապէս ամենայն երկիւղածութեամբ պատասխանեց :

— Սիրելի մայրս, կամք Տեառն օրհնեալ եղիցի . ես ամեն բանի պատրաստ եմ, միայն թէ քու կամքիդ համաձայն լինի :

« Օրհնեալ աղջիկս, գոչեց մայրապետը գրկելով եւ համբուրելով աղջիկը, ուրեմն հանգչէ հիմայ, մնացեալը ես կը խորհիմ » : Արդարեւ խորհեցաւ ալ գործադրեց ալ, վարդապետի կերպարանք ունեցող վտի սրիկայի մը կրիցը զոհելով իրեն ապաստանողը . եւ կամաց կամաց մէկ վարդապետը երկուք, երկուքը երեք եւ այլն ըրաւ . մինչեւ որ աղջկան սիրտը աչքին չափ բացուելով, նա ալ իր կողմանէ կարօտելոց օգնութեան դիմելու առաքինութիւնը ձեռք առաւ . եւ այս առաքինութիւնը աւելի ազատութեամբ 'ի գործ զնելու համար Բէրայի Եէնի Շէհիր ըսուած թաղը տուն մը վարձեց, ուր տասը

տարիի չափ բողոքեան ամենազարչելի տղմին մէջ լողալով, քանի մը երկիւղալից պատճառներով որոշումն ըրաւ իւր անարդութեանէն ազատելու, ինչպէս որ պատմութեանս սկիզբը տեսան ընթերցողք :



Գ Լ Ո Ւ Խ Բ .

Վ Ա Ն Ա Կ Ա Ն Ն Բ Ը

Կէս օրը երկու ժամ անցեր էր, վաճառականներուն ամենքն ալ քնացեր էին եւ խոր լուծիւն մը կը տիրապետէր վաճառին մէջ, երբ պահապան մը ոտքերուն մատերուն վերայ կոխելով այն երկայն սըրահներէն մէկուն մէջէն կ'անցնէր՝ որոյ երկու կողմը միաբաններուն սենեակները կը գտնուին : Սրահին մէկ անկիւնը դուռած մեծ եւ հին ժամացոյց մը երկու զարկաւ, երբ պահապանը սենեակի մը դուռը բանալով կամաց մը ներս մտաւ, եւ սօֆայի մը վերայ խոռկացող միջահասակ, թուխ եւ քառասուն տարեկան վարդապետի մը մօտենալով՝ արթնցոց զայն եւ իմացուց որ ուխտաւոր մը եկած է :

« Ո՞վ է » հարցուց վարդապետը աչուրները կէս մը բանալով :

— Կին մը, պատասխանեց պահապանը :

« Կին մը . . . ինտոր է ծո՛ ըռընտիկ է » մրմուռաց միաբանը, մինչդեռ պահապանը քթին տակէն խընդալով « դէ՛ չէ » պատասխանը տուաւ :

Վարդապետը ոտքի ելաւ, ինքզինքը շտկեց եւ դուրս ելլելով եկեղեցի իջաւ, ուր պատկերի մը առջեւ ծնկան վերայ ինկած, գլուխէն մինչեւ ոտքը

սեաւ շալ մը թողած կին մը արտասուելով կ'աղօթէր, որուն վարդապետը աչքին ծայրովը նայելով ներս մտաւ ու սկըսաւ քթին տակէն « Տէր զի բազում եղեն նեղիչք իմ, եւ բազումք յարեան 'ի վերայ իմ: Բազումք ասէին զանձնէ իմմէ թէ չիք վրկութիւն սորա առ աստուած իւր » երգել:

Ուխտագնացութեան որոշեալ օրերէն 'ի զատվանք մը ու իւր եկեղեցին արդարեւ խիստ ահարկու երեւոյթ մը կ'ունենայ... հին, մեծակառոյց եւ ահարկու շէնքեր որ լուծեան մէջ թաղուած՝ զիրենք շքեղապատող լերանց վերայ շուք կը ձգեն. ճիշդ այսպիսի տխուր օր մըն էր այն օրը՝ երբ մեր դիւցադնուհին առանձին իւր մեղքերուն վերայ կ'ողբար վանքին մէջ, ուր վարդապետ մը կէս ձայնով վերու գրեալ սաղմոսերգութիւնը կ'ընէր ըստ իւր հաճոյից. այս պարագան արտաքոյ կարգի ներգործութիւն մը ունեցաւ կնկան վերայ՝ անանկ որ մէկէն ոտքի ելլելով ներս դիմեց եկեղեցիէն, մօտեցաւ վարդապետին, ձեռքն ուզեց համբուրելու, համբուրեց, երեսը նաչեցաւ, գոյնը նետեց, դող մը եկաւ վրան, ծունկերն սկըսան մէկզմէկու զարնել, ինկաւ դետինը մարեցաւ. ուրիշ վարդապետ մը եւ դռնապան մը ներս մտան, տեսան տեսարանը ասլշեցան. երկու վարդապետ, երկուքն ալ հաւասարաբար քարացած սկըսան մէկզմէկու նայիլ. դռնապանը վաղեց ջուր բերաւ սկըսաւ սրսկել կնկան երեսին վերայ. բացաւ կինը աչուըները, զանոնք կրկին անգամ վեր վերցուց, բայց այս անգամ ետքէն եկող վարդապետին երեսը նաչեցաւ. ելաւ նստաւ, սկըսաւ մտածել ու լալ... վարդապետք քիչ մը շունչ առին. կարծեցին թէ ախտաւոր է. առաջին վարդապետը մըմռալով հե-

ուացաւ . երկրորդը մօտեցաւ կնկանն ու հարցուց .
« Տիկին ինչ եղար, հիւանդ ես » :

— Ա՛հ, գոչեց խեղճ կինը զգացմունքները ծածկելով . հայր սուրբ, ձեր կերպարանքը ինքան փոխուեցաւ քանի մը վարկենի մէջ, ս՛հ մեղաւոր եմ ես, անօրինակ մեղաւոր մը եւ անարժան այս սուրբ յարկիս . դուրս ելլեմ, դուրս ելլեմ, մեղայ առաջի Աստուծոյ եւ մարդկանց :

« Բայց աղջիկս ինչ եղար, ինչո՞ւ շուարած ես, թէ որ մեղաւոր ես, Աստուած կ'ողորմի քեզ, Նա կը սրբէ քու մեղքերդ » ըսաւ վարդապետը, 'ի գու՛թ շարժելով նորա վերայ :

— Աստուած ողորմած է՝ բայց ոչ ինձ համար, պատասխանեց կինը դառնապէս արտասուելով . Նա կը հալածէ զիս . ս՛հ, քանի մը վայրկեան առաջ ձեր սրբութեան դէմքը ասրբեր տեսայ ես :

Պարզամիտ վարդապետը բան չհասկընալով այս խօսքերէն եւ կարծելով թէ ախտաւոր կին մըն է, դիւղէն կին մը կանչել տալով ապսպրեց նորա որ հարկ եղածն ընէ . ու ինք մտնելով այն պահարանը ուր առաջին վարդապետը դացեր էր, պօռաց :

« Ի՞նչ է այս վարդապետ » :

— Գիտեմ ես, ըսաւ միւսը, սրաին յուզմունքը ծածկելու համար երեսն անդին դարձընելով :

« Աստուած բժշկութիւն տայ » ըսաւ անմխտն ու առաւ քայլեց :

— Աստուած հոգիդ առնու ւապուչ —, կրկնեց ետեւէն առաջին վարդապետը, որոյ երեսը գոյն չէր մնացած, բոլոր մարմինը կը դողդղար եւ ակուսահերը մէկզմէկու կը զարնուէին :

Գիւղէն եկող կինը բռնելով մեր դիւցաղնուհիին

ձեռքէն իւր տունը տարաւ, եւ խել մը մխիթարան
կան խօսքերով ու կատակներով հանդարտեցուց
զայն :

Օրը երեկոյ եղաւ, եւ ժամերգութիւնն սկըսաւ
վանքին եկեղեցիին մէջ, բայց միաբաններէն մին
սլակաս էր . նա տկարութիւն ունիմ ըսելով իւր սնն-
եակն առանձնացած . սաստիկ մտատանջութեան եւ
կատաղութեան մէջ էր . երբեմն նստարանի մը վե-
րայ նստելով գլուխն առջին կախած կ'արձանա-
նար . երբեմն յանկարծ ոտքի ելլելով կը շրջէր, եւ
երբեմն ալ փոքրիկ պահարանէ մը օղիի սրուակ մը
հանելով կը խմէր . ժամերը իրար յաջորդեցին, ա-
րեւն իւր մարը մտաւ, եւ գիշերուան խաւարը տի-
րապետեց . եւ անհող վանահայրը իւր ընտրելի վար-
դապետաց հետ նստած գինի կը պարպէր « համայն
ուխտաւորաց քսակին » բարեմաղթութիւններ ընե-
լով, մինչդեռ իրմէն աւելի գինքն ատող վարդա-
պետները զանազան կատակաբանութեամբ գինքը
կը շողոքորթէին :

« Ընտիր վանահայր » կ'ըսէր մէկը :

« Ախպրոսի գինիի նման » ուրիշ մը :


« Ասկիի չափ անոյշ եւ արծաթի չափ գեղեցիկ »
կը կրկնէր մէկ ուրիշը :

Գլուխները տաքցան, խօսակցութիւնները բարձ-
րացան, միաբաններն ալ լիկեցան, հանուեցան, գը-
լուխնին բացին եւ սկըսան երգել « Նայեաց սիրով .
• • • եւ այլն » :

Շնորհակալութիւն երկնից, որ մեր վարդապետ-
ները այնպիսի հանգամանքներով զարդարած է որ
փորերնին կշտանալուն պէս ալ բանի մը օգտակար
լինելու չեն աշխատիր . մտքերնին ալ չյոգնեցնելու

համար ոգելից ըմպելեաց կը դիմեն :

Աշխարհս թող կ'ուզէ նէ չհաւատայ , ես յաւիտեան որոշած եմ հաւատալ թէ բնութեան մղումը եւ պահանջումը ամեն բանէ վեր է , եւ ցանկական մասին՝ անհնար է որ նստողական կեանք վարող , վանքի մը պատերոուն մէջ շրջող , ուղած ժաման հաց ուտող , ազատաբար գինի խմող , միտք չյող-նեցընող , ծոյլ , գեր , արիւնայից մարդ մը անտարբեր մնայ եւ իւր այս կիրքին յաղթել կարենայ . ասոր հակառակը պնդելը հայհոյութիւն է . ամբարըշտական հայհոյութիւն :



Գ Լ Ո Ւ Խ Գ .

Գ Ի Շ Ե Ր Ա Շ Ր Զ Ի Կ

Ճիշդ կէս գիշեր էր , երբ վանքը լռութեան եւ մթութեան մէջ թաղուած երկիւղատու կերպարանք մը կը կրէր . այս գիշեր բնութիւնը կարծես խոր մտածութեան մէջ ընկղմած՝ շարժիլ անգամ չէր ուղեր . սեաւ ամպեր սկըսած էին ամբողջ մթնոլորտը ծածկելով լուսնոյ եւ աստեղաց լոյսէն զրկել աշխարհս . օդը սաստիկ տաք եւ նեղիչ էր . հով ամենեւին չէր անցներ . . . անձրեւն սկսաւ տեղալ , փայլակ ու կայծակ ամեն վայրկեան մէկզմէկ կը յաջորդէին , եւ որոտմունքը կը գողացնէր ամբողջ երօ կիրս :

Բնութեան այս երկիւղալից կացութեան միջոցին , վանքին դռնապանին սենեակին մէջ պլպլացող կանթեղի մը սուջեւ վարդապետ մը կանգնած կը

Արտակ
Գրանի

Այսպիսով

ինչպիսիք դժնապանէն որ դուռը բանայ . իսկ գրուած ստորոքը թէ եւ պարտաւոր էր հնազանդիլ վարդապետին, սակայն մէկ կողմանէ բնութեան վիճակը նկատելով, եւ միւս կողմանէ վարդապետին այլայլութիւնը նշմարելով, կը զարմանար եւ չէր գիտեր ինչ ընելիքը . որուն ծանրաշարժութիւնը այնքան անտանելի եկաւ վարդապետին՝ որ վերջապէս պօռաց . « Ծո՛ կրկնի ես ինչ ես, քեզ կ'ըսեմ, սա դուռը բաց »:

— Բանամ հայր սուրբ, ըսաւ դժնապանը վարդապետին սպառնալից հրամանէն երկնչելով:


« Մարդու բան չպիտի ըսես » կրկնեց վարդապետը, երբ դուռը բացուելով ինք դուրս ելաւ:

— Սատանայ է ինչ է այս վարդապետը Աստուած իմ, ըսաւ դժնապանը վարդապետը հեռանալէն վերջը, ո՞վ գիտէ որ սատանան փորը մտած է:

Եւ իրօք ալ սատանան վարդապետին փորը մտած էր, կամ որ նոյնն է՝ վարդապետը սատանային փորը մտած էր . աչքին բան չէր երեւնար, ոչ անձրեւ, ոչ սրտմուռնք, ոչ փայլակ եւ ոչ ալ կայծակ . այլ լիովին անսկստ բնութեան այն ահաբեկ կացութեան, ինք գլուխն առջին կախած մէկ փօքրիկ տան մը ճամբան բռնած էր, որ առանձին կը կենար պարտէզի մը մէջ, եւ որն որ հազիւ տեսնելի էր քանի մը ծառերու ճիւղերուն մէջ՝ որ զանի շրջապատած էին:

Անձրեւը յորդառատ կը տեղար, երբ մեր վարդապետը մինչեւ ոսկորը թաց, հասնելով յիշեալ տնակին առջին կնկան անուն մը տուաւ, եւ իսկոյն դուռը բացուելով վարդապետը ներս մտաւ:

Միջանառակ երեսունուվեց տարեկան թուիս կին



ԳԱՍ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0596194

4211A

624

809